ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ,

ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

ՏԻԿԻՆ Հ.ՀԱԿՈԲՅԱՆԻՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՓՈՐՁԱԳԵՏԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

Ք.Երևան 30.04.2026 թ

Ռաշիդ Սերոբի Գալստյան՝ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության իրավաբանական վարչության փորձագետ

Պայմանագիր N 27 առ 21.07.2025 թ.

Հաշվետու ժամանակաշրջան՝ **21.01.2026 թ.-21.04.2026թ.**

Համաձայն պայմանագրի պահանջների իմ կողմից հաշվետու ժամանակաշրջանում կատարվել են հետևյալ աշխատանքները.

1. աջակցել եմ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը (այսուհետ՝ Նախարարություն) հանձնված կազմակերպությունների գործունեությունը կարգավորող իրավական ակտերի՝ օրենսդրությանը համապատասխանեցման աշխատանքներին.
2. իրականացրել եմ Նախարարություն ներկայացված դիմումների, բողոքների, առաջարկությունների և այլ գրությունների վերաբերյալ իրավական գնահատականների տրամադրման աշխատանքներ.
3. 7 գրություն եմ պատրաստել՝ որպես քաղաքացիների դիմումների և կազմակերպությունների գրությունների պատասխան.
4. ամենօրյա խորհրդատվություն եմ տրամադրել Նախարարության և Նախարարության համակարգի կազմակերպությունների աշխատակիցներին՝ կրթության,

գիտության, մշակույթի և սպորտի ոլորտների իրավական կարգավորում պահանջող հարցերի վերաբերյալ.

5. Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 450-Ն որոշման համաձայն՝ հաշվետու ժամանակահատվածում իրականացրել եմ պարտադիր զինվորական ծառայության 2025 թվականի ձմեռային և 2026 թվականի ամառային զորակոչից տարկետումների տրամադրման գործընթացի աշխատանքներ: Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշումների նախագծերը՝ 2025 թվականի ձմեռային զորակոչից տարկետումների տրամադրման վերաբերյալ, համապատասխան հիմնավորումով և անհրաժեշտ այլ փաստաթղթերի փաթեթի հետ միասին ներկայացվել է Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ: ՀՀ կառավարությունն ընդունել է տարկետումների տրամադրման վերաբերյալ 2 որոշում (22.01.2026 թ. N 94-Ա և N 95-Ա):

2026 թվականի ապրիլի 21-ի դրությամբ 9 քաղաքացի են դիմել տարկետման համար՝ մարզական նվաճում ունենալու հիմքով, դիմումները հաշվառել եմ, ներկայացված փաստաթղթերը ուսումնասիրել եմ, մարզական նվաճումների հավաստիության ստուգման համար դրանք համեմատել եմ համապատասխան միջոցառումների արխիվային տվյալների հետ՝ ըստ հղումների (տարկետման վերաբերյալ դիմումները ներկայացվելու են մինչև 2026 թ. մայիսի 1-ը, ստացված դիմումները նույնպես պետք է հաշվառվեն, ներկայացված փաստաթղթերը ուսումնասիրվեն, մարզական նվաճումների հավաստիությունները ստուգվեն):

Մասնակցել և մասնակցում եմ Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 430-Ն որոշման 2-րդ հավելվածով (հանրակրթության և միջին մասնագիտական կրթության սովորողներ) և N 451-Ն որոշումով նախատեսված (բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողներ կամ դիմորդներ) պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետումների տրամադրման գործընթացի աշխատանքներին՝ ամենօրյա պարզաբանում տալով և իրավական աջակցություն ցուցաբերելով քաղաքացիներին և ուսումնական հաստատություններին.

6. Իրավական աջակցություն եմ ցուցաբերել մարզիկներին և մարզաձևերի ֆեդերացիաներին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 15-ի N 89-Ն որոշման համաձայն պարտադիր զինվորական ծառայությունից

մարզիկների ազատման գործընթացի հետ կապված: Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշումների նախագծերը (2025 թվականի ձմեռային զորակոչի ընթացքում)՝ պատադիր զինվորական ծառայությունից ազատման վերաբերյալ, համապատասխան հիմնավորումով և անհրաժեշտ այլ փաստաթղթերի փաթեթի հետ միասին ներկայացվել է Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ: ՀՀ կառավարությունն ընդունել է պատադիր զինվորական ծառայությունից ազատման վերաբերյալ 3 որոշում (29.01. 2026 թ. N 112-Ա, 15.01.2026 թ. N 35-Ա և N 37-Ա).

7. սահմանված կարգով կարծիք եմ նախապատրաստել և ներկայացրել մեկ հոչակագրի վերաբերյալ.

8. իրականացրել եմ Նախարարության գործունեության ոլորտների իրավական ակտերի Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխանության ապահովման աշխատանքներ՝ նախապատրաստելով կարծիք 64 իրավական ակտի (օրենքների, կառավարության որոշումների, նախարարի հրամանի) նախագծերի վերաբերյալ: Իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ կարծիք նախապատրաստելուց բացի կազմել եմ նաև Հայաստանի Հանրապետության կառավարության երկու որոշման նախագիծ:

Փորձագետ՝

Ռաշիդ Գալստյան